ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտող ուսուցիչ՝ Այվազյան Անա

Շիրակի մարզի <<Թիվ 43 հիմ նական դպրոց>> ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ ՝ Դարբինյան Աննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ……. 3-4 էջ
2. Գրականության ակնարկ ……5-6 էջ
3. Հետազոտության համատեքստ ..…….. 7-10 էջ
4. Հետազոտության ընթացք ……11-12 էջ
5. Գործնական համատեքստ ……..12-15 էջ
6. Եզրակացություն …….. 15-16 էջ
7. Գրականության ցանկ ……17 էջ

ՆԱԽԱԲԱՆ

<<Դաստիարակությունը մարդուն կարող է դարձնել
առաքինի Սոկրատես և կամ այլանդակ Ներոն :
Դաստիարակությունն ամեն ինչ է `և ՛ կյանք և՛
մահ , և փրկություն և՛ կործանում>> :

Վ.Գ. Բելինսկի

Դպրոցը յուրաքանչյուր սովորողին գիտելիքներ տրամադրելուց զատ, հնարավորություն է ընձեռում ինքնաճանաչման , ինքնքկատարելագործման, ինքնակրթության: Դպրոցում է դրվում ապագա քաղաքացու կյանքի գլխավոր ուղենիշների՝ արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը :

Դպրոցում ստացած կրթությունը արագացնում է հասարակական կյանքի և առանձին

անհատի մշակութային փոփոխությունները և նպաստում է ազգային առանձնահատկությունների և ավանդույթների ձևավորմանը , ինչպես նաև մարդու կրթվածության մակարդակի զարգացմանը : Սակայն կրթությունը ամբողջական չի լինի , եթե ընտանիքը չհամագործակցի դպրոցի հետ : Ծնողի և ուսուցչի միջև

ներդաշնակ համագործակցությամբ է հնարավոր հասնել երեխայի համակողմանի և լիարժեք զարգացմանը, և որպես անհատների՝ նրանց կայացմանն ու դաստիարակությանը :

Մեր դպրոցներում այսօր կան բազմաթիվ խնդիրներ , որի մի մասն է

կազմում դպրոց –ծնող - ուսուցիչ փոխհարաբերությունների ոչ լիարժեք լինելը :

Այդպիսի անհամաձայնությունները խոչընդոտում են դպրոցին կրթադաստիարակչական գործառույթի բնականոն իրականացմանը: Ընտանիքի դաստիարակչական գործոնը նվազում է բազմաթիվ ընտանեկան խնդիրների պատճառով : Ընտանեկան անկայունության և այլ գործոնների ազդեցությանբ շատ ծնողներ անտարբեր են դպրոցի ու իրենց երեխաների հանդեպ : Երխաների դաստիարակման որակի վրա բացասական ազդեցություն է ունենում նաև ծնողների զբաղվածությունը: Այս դեպքում երեխայի համար միակ աջակիցը մնումէ ուսուցիչը, որն իր վրա է վերցնում ծնողների պարտականությունները: Ուսուցիչը պարտավոր է աջակցել և օգնել երեխաներին, սակայն ծնողը նույնպես պարտավոր է ուշադրություն դարձնել երեխայի խնդիրներին , համագործակցի ուսուցչի՝ դասղեկի հետ որպեսզի երեխան կարողանա դիմակայել կրթական գործընթացում: Խմբակային զրույցները, ծնողական ժողովները և անհատական հանդիպումները յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի մի մասն է կազմում, բայց կան դեպքեր, երբ ավելի հեշտ է աշխատել աշակերտի հետ քան ծնողի:Ուսուցիչը պետք է տեղյակ լինի աշակերտի ընտանեկան հարաբերությունների մասին,ծնողի հետ զրուցելիս պետք է պահպանի զգուշություն:Այս ամենը հաշվի առնելով միայն կկարողանան համագործակցել և կստեղծվի ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններ և դա կնպաստի կրթության և ընտանեկան դաստիարակության զարգացմանը:Այս խնդրի կարգավորումը ուսուցիչների ու ծնողների կողմից մանկավարժական գործընթաց է:

Գրականության ակնարկ

Կրթված մարդը, ըստ Ա.Ա. Ռեանի և Ն.Վ. Բորդովսկու, ոչ միայն կենսագործունեության հիմնական ոլորտների իմացող և կարող մարդն է, այլ նաև մարդ ,որի մոտ ձևավորված է աշխարհայացք և բարոյական սկզբունքներ, իսկ հասկացությունները և զգացմունքը ստացել են արժանապատիվ և բարձրարժեք ուղղվածություն:Այսինքն կրթվածությունը ենթադրում է նաև դաստիարակություն:Իսկ այդ ամենը խթանում է սովորողի ուսման գործընթացին:

Դաստիարակության էության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:Ա. Վ. Մուդրակի կարծիքով մանկավարժական գրականության մեջ կարելի է տարբերել դասիարակության մի քանի բնորոշումներ.

. դաստիարակությունը լայն իմաստով իրականացվում է կրթադաստիարկչական հաստատությունների համակարգի միջոցով,

. դաստիարակությունը, սոցիալական իմաստով հասրակության ազդեցությունն է մարդու վրա,

. դաստիարակությունը՝ ներառյալ դաստիարակչական աշխատանքը՝ նեղ իմաստով, դա աշակերտների մոտ որոշակի հատկանիշների, հայացքների, համոզմունքների համակարգի ձևավորումն է,

. դաստիարակությունը նեղ իմաստով կոնկրետ դաստիարակչական խնդիրների լուծումն է, օրինակ կոնկրետ բարոյական հատկանիշի դաստիարակումը:

Ըստ Մ. Ի. Ռոժկովի դաստիարակությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշով.

. դաստիարակվողի վրա ազդեցության նպատակաուղղվածությունը,

. այդ ազդեցությունների սոցիալական ուղղվածությունը,

. երեխաների մոտ որոշակի նորմերի յուրացման համար պայմանների ապահովումը,

. մարդու կողմից սոցիալական դերերի համալիր յուրացումը,

. անհատի ձևավորման և զարգացման գործընթացի կիրառումը,

. ինքնաիրացման համար պայմանների ձևավորումը և ապահովումը:

Սակայն ոչ բոլոր հետազոտողներն են դաստիարկությունը դիտարկում որպես նպա տակաուղղված ազդեցություն: Նրանք գտնում են, որ դաստիարակությունը անհատի զարգացման նպատակաուղղված կառավարումն է և մարդու զարգացման համար պայ մանների ստեղծումը: Դաստիարակության հասկացության էության ժամանակակից մոտեցմամբ այն բնութագրվում է ոչ թե որպես երեխայի վրա արտաքին միակողման ազդեցություն այլ համատեղ կենսագործունեության ժամանակ որպես մեծահասակնե րի և երեխաների փոխազդեցությունը /Ն.Մ. Բորիտկո, Ի.Ա. Կալասնիկովա և այլն: Իսկ ըստ Ջոն Դյուի՝ կրթությունը սոցիալական գործընթաց է, դպրոցը պարզապես համայնքային կյանքի այն ձևն է, ուր կատարված են բոլոր այն գործոնները, որոնք առավելագույնս արդյունավետ են երեխայի մարդկության կողմից ժառանգած ռերսու սների ներկայացնելու և իր սեփական ուժերը սոցիալական նպատակներին ծառայ եցնելու համար:

Վ.Ա. Սուխոմլինսկին պնդում էր <<Դպրոցի և ծնողների խնդիրն է յուրաքանչյուր Երեխայի երջանկություն պարգևել:Երջանկությունը բազմակողմանի է. Դա և՛նրանու մ է, որ մարդը բացահայտում է իր կարողությունները, սիրում է աշխատանքը և դառ նում դրանում ստեղծագործող, և՛ շրջապատող աշխարհի գեղեցկությունը վայելելու և ուրիշների համար գեղեցկություն ստեղծելու, և՛ մեկ ուրիշին սիրելու , սիրված լինելու երեխաներ դստիարակելու մեջ իրական մարդիկ…Միայն ծնողների հետ միասին, ընդ հանուր ջանքերով, ուսուցիչները կարող են երեխաներին մարդկային մեծ երջանկու թյուն պարգևել:

……

1. Н.В. Бордовская, А.А. Реан,Педагога: Учебное пособие для вузов.-СПБ 2000г

2. А.В. Мудрик Социальная педагога : Учеб. Для студент пед.вузов 2005 г

3. М. И .Рожков. Теория и методика воспитания.- М. 2004г

4. И.А. Колесникова педагогический журнал-2008г

5. Վ.Ա. Սոխոմլինսկի 5-րդ հատոր . Կիև 1979թ

Հետազոտության համատեքստ

Համաձայն <<Կրթության մասին >> ՀՀ օրենքի Հոդված 3-ի 1-ին կետի <<Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման դաստիարակությյան գործընթացը է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և նոր սերունդներին փոխանցելու համար: Կրթված մարդը ոչ միայն կենսագործունեության հիմնական ոլորտների իմացող և կարող մարդ է, այլ նաև մարդ, որի մոտ ձևավորված է աշխարհայացք և բարոյական սկզբունքներ, իսկ հասկացությունները և զգացմունքները ստացել են արժանապատիվ և բարձրարժեք ուղղվածություն, այսինքն կրթվածությունը ենթադրում է նաև դաստարակություն: Իսկ կրթության և դաստիարակության գործընթացները նպաստում է մարդու զարգացմանը և խթան է հանդիսանում սովորողի ինքնքդասիարակման, ինքնակրթության, ինքնզարգացման:

Ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության դժվար և բարդ խնդիրը լուծելու համար պետք է որակների ձևավորման պայմաններ ստեղծել: Ուսուցչի և ծնողի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն էլ իր հերթին նպաստում է երեխայի ընտանեկան դաստիարակությանը բարդ գործընթացին: Ծնողներն ու ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են, ուստի դաստիարկությունը արդյունավետ կլինի համատեղ համագործակցության պայմաններում: Այդ համագործակցությունը կստացվի, եթե նրանց միջև լինի փոխադարձ հարգանք: Ժամանակակից մոտեցմամբ դաստիարակության հասկացության էությունը բնութագրվում է ոչ թե որպես երեխայի վրա արտաքին միակողմանի ազդեցություն, այլ

համատեղ կենսագործունեության ժամանակ որպես մեծահասակների ու երեխանե
րի փոխազդեցություն և համագործակցություն:

Ուսուցման ուսուցման գործընթացում համագործակցության համատեղ արդյու
նքում ծնողը և ուսուցիչը պետք է աշակերտի մեջ զարգացնեն կարողությունները
և հմտությունները ինչպես նաև վարքը: Այդ ամենը իհարկե իրականացվում է ուսու
մնական առարկաների միջոցով: Շատ կարևոր է աշակերտի մեջ արժեհամակարգի
ձևավորելը, արժեհամակարգի առանցքը, դրանք հիմնարար արժեքներն են:Հայոց
ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են՝ ազգը, որպես հավաքական
ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր տարածք, լեզուն՝
որպես հայ ինքնության երաշխավոր, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայր
ենիք, միասնական մշակույթ, պետականությունը, ազատության, և արդարության վ
րաբերյալ մեր պատկերացումները: Արժեհամակարգը մշտապես փոխվում է, զարգ
անում, կատարելագործվում, իսկ որոշ արժեքներն էլ անհետանում, իսկ շատ
արժեքներ էլ դարերի ընթացքում ամրանում են: Պատմության ուսումնասիրությունը
ցույց է տալիս, որ մեր ազգային արժեհամակարգում առկա են մնայուն արժեքներ:
Այս առումով մեզ մեծ հնարավորություն է տալիս հայոց պատմություն առարկան:
Պատմությունից սովորողները յուրացնում են <<Վարդանանց պատերազմ>>, <<Գրերի
գյուտը>>, <<Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն>>, <<Մայիսյան
հերոսամարտերը>> ուսումնական նյութերը և նրանց ներաշխարհ՝ <<հոսում>> ոչ
միայն գիտելիքներ այլ նաև հայացքներ , համոզմունքներ, թշնամու նկատմամբ ատել
ություն, հայրենասիրություն և այլ որակներ, որոնք ընտանեկան դաստիարակության
կարևոր պայմաններից են: Պատմության յուրաքանչյուր դաս կարող է դառնալ հայրե
նասիրական դաստիարակության փայլուն օրինակ: Աշխարաքաղաքական այս բա
րդ ճանապարհին դժվարին խնդիր ունի հայ ժողովուրդը և դրա լուծման բանալին
գտնվում է կրթության ոլորտում: Այստեղ կարևոր դեր ունի ուսուցիչը, արժեհա
մակարգ զարգացնելու և հումանիստ և հայրենասեր սերունդ դաստիարակելու
գործում: Մանկավարժի գործը սովորեցնելն է, իսկ աշակերտինը՝ սովորելը: Հետևա
բար, ուսուցչի և սովորողի համագործակցությունը ունի առաջատար դեր ,սակայն
ուսուցման հաջողությունը որոշվում է ուսուցման նկատմամբ աշակերտների վեր
աբերմունքով, իմացության ձգտումով, գիտակցաբար գիտելիքներ ձեռք բերելու

ունակությամբ: Ուսուցման և դաստիարակության արդյունք է համարվում ոչ միայն գիտելիքները այլ նաև հասարակության մեջ և նրա հետ համատեղ գործունեության և փոխազդեցության եղանակների տիրապետելը: Պրակտիկայում կիրառվում են դաստիարակության մի քանի տարբերակներ. Առաջին տարբերակը բիհևորիզմի տեսության վրա է հիմնված, որը դիտարկում է մարդուն որպես անհատականություն իսկ անհատականությունը մարդու վարքագիծն է: Այս տարբերակի հիմքում ընկած է ասոցացման տեսությունը որի էությունը հետևյալն է, որ դաստիարկությունը հիմնվում է զգայական ճանաչողության վրա, և ուսումնական գործունեության հմնական խնդիրը սովորողի գիտակցությունը հարստացնել կերպարներով: Ասոցացման հիմնական մեթոդը վարժություններն է: Դաստիարակության մեթոդի երկրորդ տարբերակը ավելի ժամանակակից է եղանակ է և այն կապված է ուսուցչի և աշակերտի փոխազդեցությունների հետ: Այն դիտարկվում է ոչ թե երեխայի վրա ազդեցություն այլ ուսուցչի և աշակերտի միջանձնային համագործակցություն, այս տարբերակի դեպքում կիրառվում են դաստիարակության մի քանի մեթոդներ.

. Երկխոսական-գործնական մեթոդ, որի դեպքում մանկավարժը ստեղծում է անվտանգ երկխոսության իրավիճակ, որտեղ ուսուցիչը և աշակերտը կարող են միմիյանց ներկայացնել իրենց նպատակները, հետաքրքրությունները, արժեքները ինչից հետո սկսում են համատեղ գործողություն կատարել: ՈԻսուցիչը իր վստահելի հաղորդակցությամբ կարող է օգնել աշակերտին գիտակցել հետաքրքրությունը:

. Զարգացնող դաստիարակություն, որը հիմնված է մտածողության ձևավորման վրա, այս մեփոդի սկզբունքներն՝ տեսական գիտելիքների գերակշռում, արագ տեմպերով ուսուցումը, աշակերտների կողմից ուսուցման գործընթացի գիտակցում, նպատակաուղղված և համակարգված աշխատանք՝ աշակերտների ընդհանուր զարգացվածության ուղղությամբ:

.Անհատական – կողմնորոշիչ զարգացնող դաստիարակություն, որում հատուկ նշանակություն է տրվում կենսագործունեության փորձին, որը աշակերտը ձեռք է բերում ընտանեկան, սոցիալ-մշակութային միջավայրի պայմաններում: Այս մեթոդը կիրառելիս բացահայտվում է աշակերտի ինտելեկտի անհատական առանձնահատկությունները, յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է ուսուցման և դաստիարակության անհատական ծրագիր:

Իսկ Երրորդ տարբերակը ուսուցչի կողմից աշակերտի անհատականության բացահայտումն է: Այստեղ կիրառվում են հետևյալ մեթոդները.

. Տարիքային մոտեցումը, որը նպաստում է իմանալու տարիքի հետ կապված դաս տիարակության խնդիրները :

. Անհատական մոտեցումը, սա սկզբունք է որը ուսումնադաստիարկչական գործընթացում, աշխատելով յուրաքանչյուր աշակերտի ցուցաբերում է անհատական մոտեցում: Դաստիարակության անհատական մոտեցումը ենթադրում է, որ այս գործընթացում պետք է հաշվի առնել աշակերտի առանձնահատկությունը և պետք է հաղթահարել ընտանեկան դաստիարակության բացթողումները, կամքի թուլությունները, մոտիվացվելու բացակայությունը:

Չորրորդ տարբերակը դիտարկում է տեխնոլոգիաների կիրառումը, որի ուսուցումը նպաստում է ինքնակատարելագործմանը:

. Մանկավարժական աջակցությունը միջոների համակարգ է, որը օգնում է հաղթահարելու ուսումնական, աշխատանքային, ստեղծագործական խնդիրները լուծելիս:

. Խնդրահարույց ուսուցումը գերծընթացի այսպիսի կազմակերպում է, որի ընթացքում ուսուցիչը խնդրահարույց իրավիճակներ է ստեղծում և սովորողին ինքնուրույն գործունեության է մղում: Այսպիսով, արդի հայ հասարակության պահանջին համապատասխան՝ ներկայումս ժամանակակից դպրոցում դաստիարակչական գործունեություն իրականացնելիս յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հնարավորություն ընձեռնի երեխային ինքնուրույն մտածել, ձևակերպել խնդիրները և ինքնուրույն գտնել լուծումներ, բայց իր վերահսկողության ներքո: Այս առումով ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները պետք է լինեն համագործակցային, որի հիմքում պետք է դրվեն աշակերտի անհատական առանձնահատկությունները, ինչից ելնելով միայն կարելի է կիրառել այս կամ այլ մեթոդը, ինչն էլ կբերի սովորողի անհատականության ձևավորմանը: Սովորողների անհատականության ձևավորմանը վրա անմիջական ազդեցություն է ունենում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը, որը նպաստում է երեխայի մոտ, ֆիզիկական, մտավոր, աշխատանքային, մշակութային, բարոյական, ընտանեկան դաստիարակության զարգացումը:

Մանկավարժության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում աշխատանքայի դաստիարակությունը որի ընթացքում հարկավոր է զարգացնել նրանց կողնորոշվելու, աշխատանքը

պլանվորելու, արտադրության գործիքներին, նյութերին խնամքով վերաբերվելու և աշխատանքում բարձր որակի հասնելը, ինչպես նաև ազատության և անկախության հիմքը: Իսկ բարոյական դաստիարակության հիմնական նպատակը՝ ըստ Ռուսոյի, մարդասիրությունն է, որն էլ ձևավորում է բարոյական զգացմունքներ և կամք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտության նպատակն է պարզել ծնող-ուսուցիչ համագործակցության մակարդակը, ծնողի ներգրավածությունը երեխայի կրթության և դաստիարակության համակարգում : Հետազոտությունը իրականացնելու համար իմ դպրոցի 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանում սովորող աշակերտների ծնողների հետ պետք է կատարեմ հարցում, և քանի որ աշակերտները և ուսուցիչները գտնվում են արձակուրդում , հետևաբար հարցումը կիրականացնեմ հեռավար տարբերակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Ծնողների հետ հարցումը իրականացրել եմ հարցաթերթի միջոցով :

Տրամադրում եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար
48 ответов



Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում :
48 ответов



Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները դաստիարակման գործընթացում:
48 ответов



Հաճախակի այցելու՞մ եք դպրոց:
48 ответов



Գիտե՞ք, թե որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը ձեր երեխան:
48 ответов



Վստահու՞մ եք դպրոցին:
48 ответов



Համագործակցու՞մ եք ուսուցիչների հետ;
48 ответов



Գո՞հ եք ձեր երեխաների ուսման որակից;
48 ответов



Մասնակցու՞մ եք ծնողական բոլոր ժողովներին:
48 ответов



Մասնակցու՞մ եք դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:
48 ответов



Հարցմանը մասնակցեցին տվյալ դասարաններում սովորող աշակերտների ծնողների 50 տոկոսը և ըստ ցուցանիշի մասնակից ծնողների մեծ մասը համագործակցում են ուս ուցիչների հետ և նպաստում իրենց երեխաների կրթության և դաստիարակության բարելավմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով տեսական վերլուծությունից և կատարած աշխատանքից, եկել եմ հետևյալ եզրահանգմանը:

Մենք յուրաքանչյուրս ապրելով մեր երկրում փորձում ենք լինել մեր երկրի լիարժեք քաղաքացի, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, ձգտում ենք հասնել բարձրունքների՝ մեր առջև դնելով բազմաթիվ նպատակներ, սակայն նպատակներին հասնելու ճանապարհին շատերը կանգ են առնում, որովհետև դժվարանում են հաջորդ քայլը կատարել: Դա խոսում է այն մասին, որ ժամանակի ընթացքում չեն կարողացել ձեռք բերել բավարար կարողություններ և հմտություններ: Ուսուցիչը և ծնողը հանագործակցության մեջ մտնելով կփորձեն ճանապարհ բացել երեխայի համար: Ծնողն ու ուսուցիչը լինելով աշակերտի դաստիարակները պետք է նպատակամղված գործունեություն ցուցաբերեն: Ուսուցիչը պետք է ոչ միայն գիտելիք տա, այլ ուղղորդի նրան անցնել ճիշտ ճանապարհով: Համատեղ գործունեության արդյունքում մենք կունենանք լավ ապագա՝ հայրենասեր, բարոյական բարձր հատկանիշներով օշտված, նվիրված իր հայրենիքին ու իր ընտանիքին, սա է դաստիարակության կարևոր ցուցիչը: Սովորողին որպես ամբողջական անձ դիտելը, այսօր պետք է լինի կրթության հիմքում: Մենք այսօր ապրում ենք մի աշխարհում, որին անհրաժեշտ են հումանիստական, կրթական միջավայրում ձևավորված քաղաքացիներ : Նրանք պետք է դառնան մեր ապագա պատմություն կերթողները: Ուզում եմ մեջբերել Ա. Մակարենկոյի խոսքերը՝ <<Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակենք՝ մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակենք՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքը, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ամիրջանյան, Ա.Ա. Սահակյան <<Մանկավարժություն>> ձեռնարկ, 2005թ.:
2. Վ. Ա. Սոխոմլինսկի 5-րդ հատոր, Կիև , 1979թ.:
3. Ջոն Լոկ <<Դաստիարակության տեսություն >>:
4. Մ. Ի. Ռոժկով <<Դաստիրակության մեթոդիկա >> 2004թ.:
5. Անտոն Մակարենկո <<Դաստիարակության գործընթացի կազմակերպման Մեթոդիկա>> 1936թ.:
6. Ժան Ժակ Ռուսո <<Էմիլ կամ դաստիարակության մասին >> 1762թ.: